

ՆՈՅԵՄԲԵՐ 2020

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի տեղադրում և փոխարինում	6
1.3. Ջրահեռացման համակարգ	7
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	8
1.5. Էներգահամակարգ	8
1.6. Մեքենա-մեխանիզմներ	9
2. Առևտրային տնօրինություններ	10
2.1. Բաժանորդների տվյալներ	11
2.2. Հասույթ	11
2.3. Գանձում	12
2.4. Դեբիտորական պարտքեր /Երավարանական վարչություն/	13
2.5. Ջրաչափեր	14
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	15
3. Տեխնիկական տնօրինություն	16
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	17
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	18
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	20
3.4. Ջրատար համակարգի բարելավում	21
3.5. Գոտիավորման աշխատանքներ	22
4. Լրատվական ծառայություն	26
5. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն	28
5.1. Փաստաթղթերի մշակում	29
5.2. COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ	29
5.3. Դասընթացներ/սեմինարներ	29
5.4. Այլ աշխատանքներ	30
6. Համակազմային ցանց և սերվերային համակարգ	31
6.1. Համակարգային ցանց	32
6.2. Բնտերակտիվ համակարգ	32

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարադիմացկուն և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես


Մարզ Արարատ

● Նոր Նորք վարչական շրջան

«Հարավ» SS «Կենտրոն» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Գյուղ Նոր Խարբերդ 2 փողոցը սնող $d=50$ մ պողպատե ջրագիծը, որը անցնում էր սեփական

տնատիրությունների տակով, ենթարկվել էր կոռոզիայի և գտնվում էր խիստ վթարային վիճակում: « Կ ե ն տ ր ո ն » տ ե ղ ա մ ա ս ի ա շ ի ա տ ա կ ի ց ն եր ի կողմից Նոր Խարբերդ 2 փողոցի

սկզբնամասում կառուցվել է նոր պոլիէթիլենային խողովակներով ջրագիծ $d=63$ մ $L=160$ զ/մ երկարությամբ: Թվով 6 բնակիչ-բաժանորդների ջրաչափական սարքերը տեղափոխվել են տարածքից դուրս: Կատարված աշխատանքների արդյունքում բացառվել են ապօրինի միացումները, բարելավվել է ջրամատակարարման որակը:



● «Հարավ» SS «Արտաշատ» տեղամասի աշխատակիցների կողմից ա/թ սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում իրականացվել են ջրագծերի փոխարինման լայնածավալ աշխատանքներ Վերին Արտաշատ համայնքում: Նորաշեն-Վ.Արտաշատ $d=110$ մ և $d=160$ մ պոլիէթիլենային սնող ջրագծերից իրականացվել են $d=32-90$ մ $L=2215$ զ/մ ընդհանուր երկարությամբ պոլիէթիլենային ջրագծերի կառուցում, ինչը ապահովել է համայնքի Սպանդարյան, Գալստյան, Ղուկասյան, Նար-Դոս, Կոմիտաս, Երևանյան փողոցների կանոնավոր և որակյալ ջրամատակարարումը: Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել են 1960-ական թվականների կառուցված և վթարային վիճակում գտնվող $d=529$ մ $L=980$ զ/մ և Նորաշենի գերեզմանոցների միջով անցնող $d=100$ մ $L=1420$ զ/մ երկարությամբ մետաղական ջրագծերը, վերացվել են ջրակորուստները և խնայվել է մոտ $Q=5$ լ/վրկ ջրաքանակ:

● Գյուղ Լանջազատ

Անդրանիկի փ. $d=400$ մ Գառնի-Զող ջրատարը, որը կառուցվել էր 1970-ական թվականներին, անցնում էր համայնքի սեփականաշնորհված հողամասերով և առանձնատների տարածքներով: «Արտաշատ» տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել է $d=400$ մ, $L=500$ զ/մ պոլիէթիլենային և $L=24$ զ/մ մետաղական խողովակներով շրջանցող ջրատար: Իրականացվել է ջրագծերի կառուցում՝ պոլիէթիլենային $d=63$ մ և $d=110$ մ $L=450$ զ/մ ընդհանուր երկարությամբ և մետաղական՝ $d=100$ մ $L=30$ զ/մ երկարությամբ: Թվով 15 բնակիչ-բաժանորդների ջրաչափական սարքերը տեղափոխվել են տարածքից դուրս:



Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է անվերահսկելի տիրույթում գտնվող $d=426$ մմ $L=720$ գծ/մ երկարությամբ ջրատարը, վերահսկելի տիրույթ են տեղափոխվել $d=400$ մմ և $d=100$ մմ ճնշման կարգավորիչ փականները, տնտեսվել է մոտ $Q=10$ լ/վրկ ջրաքանակ:



Նույնբեր ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	2,131
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	22,490
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	24,045
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	8,820
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	2
Շահագործումից հանված ջրագիծ	մ	1475.5
Կառուցված ջրագիծ	մ	3253.3
Կառուցված կոյուղագիծ	մ	442
Վերացված գաղտնի վթարներ	հատ	44
Փոխարինված փական	հատ	20
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	452
Մաքրված դիտահոր	հատ	874
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	56.4
Վերացված վթարներ	Չափման միավոր	Քանակ
Ջրամատակարարման ցանցում	հատ	1169
Ջրահեռացման ցանցում	հատ	2221
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	566

Նույնբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	767	944	607

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱՊԻՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է նույնբեր ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	259	22	4	0	0	1	0	2	0	288
Փոխարինված	311	32	2	0	3	1	1	0	1	351
Տեղափոխված	4	123	0	0	0	0	0	0	0	127
Տեխ. ակտ	75	24	2	1	1	0	0	1	0	104
Ընդամենը	649	201	8	1	3	2	1	3	1	870

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 870 ջրաչափ: Կատարված աշխատանքների 74,60 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Նոյեմբեր ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև՝ Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամաս	Կոյուղագծերի լվացում / Մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում / տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում / զճ/մ
1	Արաբկիր	630	254	12
2	Մաշտոց	1300	240	12
3	Շահումյան	1715	258	0
4	Զեյթուն	800	241	12
5	Շիրակ	660	420	75
6	Արթիկ	0	66	0
7	Ապարան	0	29	0
8	Ալավերդի	1660	4	0
9	Աշոցք	0	3	3
10	Բերդ	60	5	0
11	Իջևան	515	15	0
12	Լոռի	2440	183	0
13	Նոյեմբերյան	0	17	0
14	Սպիտակ	150	14	0
15	Ստեփանավան	30	14	0
16	Թալին	0	11	0
17	Տաշիր	300	10	0
18	Էջմիածին	0	126	0
19	Չարենցավան	640	84	0
20	Արմվյան	2520	85	30
21	Հրազդան	2840	115	0
22	Աշտարակ	1935	4	0
23	Կենտրոն	460	265	0
24	Հյուսիս	140	244	60
25	Հարավ	0	432	0
26	Էրեբունի	140	244	0
27	Արմավիր	0	130	0
28	Արտաշատ	0	128	0
29	Արարատ	969	69	17
30	Մալիս	0	45	0
31	Գավառ	250	16	0
32	Սևան	0	67	10
33	Մարտունի	0	22	0
34	Վարդենիս	0	7	0
35	Ճամբարակ	0	8	3
36	Դիլիջան	0	37	0
37	Վայք	0	20	0
38	Եղեգնաձոր	80	9	0
39	Զերմուկ	0	20	11
40	Սիսիան	80	67	0
41	Գորիս	0	44	0
42	Կապան	0	71	0
43	Մեղրի	0	22	244
	Ընդամենը	20314	4165	489

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

● Սևանի N3 կեղտաջրերի պոմպակայանի մղման d=150 մմ տրամագծի խողովակի վրա անցք էր բացվել և ջուրը մեծ շիթով թափվում էր պոմպակայանի հորի մեջ: Արդյունքում վթարը հայտնաբերվեց և վերացվեց և այժմ պոմպակայանը աշխատում է բնականոն ռեժիմով: Վթարվել էր նաև էլեկտրական ամբարձիչը, որը նույնպես վերանորոգվեց:

● Մարտունի կեղտաջրերի մաքրման կայանում կատարվել են զննման աշխատանքներ, մասնավորապես զննվել են հորիզոնական կոնվեյերների պոլիէթիլենե պատյանները, որոնց վիճակը գնահատվել է լավ: Կատարվել է նաև քերիչ սանրերի զննում և կարգաբերում:

● Երևանի կեղտաջրերի մաքրման կայանում մանր ճաղավանդակի քերիչ սանրերից մեկը ծովել էր, որի արդյունքում տվյալ ճաղավանդակը չէր աշխատում: Վերը նշված քերիչ սանրը հատուկ մամլիչի միջոցով ուղղվեց և մոնտաժվեց: Արդյունքում ճաղավանդակները աշխատում են բնականոն ռեժիմով:

● Ջերմուկի կեղտաջրերի մաքրման կայանում օդամղիչների օդի ֆիլտրերը խցանվել էին, որոնք փոխարինվեցին և այժմ օդամուղը աշխատում է բնականոն ընթացքով: Նաև զննվեցին և կարգաբերվեցին մանր ճաղավանդակի քերիչ սանրերը:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	72,916	10,8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	85,642	16,2
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	168,882	7
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	126,071	21,6
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	110,202	9,9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	19,929	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	10,353	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	18,288	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	6,833	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	3,172	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Քանակ
Պոմպի աշխատանքի զննում և կարգավորում	87
Էլեկտրական սարքերի զննում և կարգավորում	8
Այցեր	11

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Նոյեմբեր ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար: «Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար նոյեմբեր ամսվա ընթացքում նորոգվել է թվով 7 մեքենայի շարժիչը մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:



Թվով 8 մեքենայի արգելակման համակարգեր նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 9 մեքենամեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգածողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամսանիփներ, առանցքակալներ, կիսատնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 8 անվադող փոխարինվել և հավասարակշռվել է: Թվով 2 մեքենայի մարտկոցը փոխարինվել է նորերով: Փոխարինվել են թվով 162 մեքենամեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, քսայուղեր և անտիֆրիզ: Նորոգվել են թվով 3 մեքենայի փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամսանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Թվով 7 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 6 մեքենայի և էքսկավատորի համար նորոգվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ, միացներ: Վերանորոգվել են թվով 6 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամումի լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 2 մեքենամեխանիզմների վրա: Թվով 3 մեքենայի վրա իրականացվել են գներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուկիներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 7 մեքենայի վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 3 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Թվով 8 մեքենայի վառելիքի համակարգեր նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:



Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.12.2020թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 519,583 պայմանագիր: Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում

Տնօրինություն	Սպառողներ	2020թ. նոյեմբեր ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	651,833	498,216	76,4
	Իրավաբանական անձ	28,830	21,367	74,1

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	723,014	580,778	80,3
	Իրավաբանական անձ	34,270	23,759	69,3

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): Արդյուքնում՝ տեղամասերում 2020թ. նոյեմբեր ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվը, (այցելությունների թիվը), չնայած Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 36,333 բաժանորդով (կամ մոտ 6,3%):

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել է տվյալների բազա է մուտքագրվել թվով 140 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) զուգահեռ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Նոյեմբեր ամսվա ընթացքում ստուգաչափվել է 2691 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 11.2020
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	1083	1274	215	2572
	Իրավաբանական անձ	58	56	5	119
	Ընդամենը	1141	1330	220	2691

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ նոյեմբեր ամսին փոխարինված 2691 ջրաչափերի մոտ 58%-ը (կամ 1550 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 85,300 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2020թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Նոյեմբեր ամսին գանձումը կազմել է 1,898 մլն դրամ (90,6 %):

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում մինչև մարտ ամիսը, կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում,

ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ինչպես նաև ռազմական դրությունը, ընկերությունը նույնպես ամսին զերծ է մնացել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրառվող մեթոդներից (բացառությամբ SMS-հաղորդագրությունների):

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Նույնպես ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 69 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 7,3 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2020թ		Բավարարված		Մերժված		2017-2020թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
10310	1189686302	6569	664707721	142	19805134	3341	585139433	3711	318579324

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 63,62 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 1,38 %-ը մերժված:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.12.2020թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում նույնպես ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	7,517	1,964
Բնակիչ-բաժանորդներ	5,653	1,424
Իրավաբանական անձեր	1,864	539

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՍ սպասարկման տարածքում շուրջ 227.4 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2020 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.12.2020թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	687,869	578,986	84.17	33,140	23,750	71.67
	Առանց ջրաչափի	35,145	1,792	5.10	1,130	9	0.80

Տվյալների բազայում 01.12.2020թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	859,824	378,115	43.98	37,151	9,814	26.42

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 3693 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 783 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճզգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2318	1888	81.3
գ.Պոռշյան	1557	1029	65.8
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5856	1810	30.8

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր: Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, ջրաչափերի փոխարինման որոշակի աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 7,745, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 5,875, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 997, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1,403, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 854, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 1160 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 2940 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում: Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից: Հայտնաբերված և արձանագրված խախտումների քանակի նվազումը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ պայմանավորված է նաև երկրում տիրող, վերը նշված իրավիճակների հետ:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Առևտրային	108	108,015	13,036,251

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի նոյեմբեր ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 98.6%, ինչը ինչը 0.2%-ով ավել է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն





Մարզերում այդ ցուցանիշը կազմել է 84.4%, որը 0.2%-ով ավել է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:




Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի խմբի կողմից ՇՏ-նորում կարգաբերվել են 26 ՃԿՊ-ներ:

Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՊ-ների գրաֆիկներից մի քանիսը.




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուր ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2020թ-ի նոյեմբեր ամսին, 2019թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է 80 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսը նվազել է 75 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկներում.



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 15838 կՎտ.ժ. (3,23%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր ԱՌԱՆՑ ԽԱՐԲԵՐԴԻ ՊՈՄՊԱՎԱՅԱՆԻ*




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է 189 հասցե: Թվով 3 հասցեում հայտնաբերվել է հավելագրում, որը ճշտագրվել է ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից: Թվով 1 հասցեում հայտնաբերված լարանցման վերացում, հետագիծն անհայտ է: Թվով 5 հասցեներում փոխարինվել են հաշվառման սարքերը: Թվով 6 հասցեներում կատարվել է էլ. էներգիայի պարամետրերի ստուգում, որոնցից 2-ում վերականգնվել է էլ. էներգիայի սնուցումը:

- Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսը ավելացել է 163,391 կՎտ.ժ կամ 7.5 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Էջմիածին




Կատարված աշխատանքներ

Թվով 340 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 151 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Ինվերտորների տեղադրու

29 պնևմատիկ համակարգեր փոխարինվել են ինվերտորային համակարգով, էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 368,19 ԿՎտ/ժամ (2%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


Տեղադրված ինվերտորների սպառած էլեկտրաէներգիա



Հաշվետու ժամանակահատվածում 10 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:


● Նոյեմբեր ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 59,657 կՎտ.ժամ կամ 7,13% (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է 32,737 կՎտ.ժ/ամիս կամ 1,69%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն նվազել է 156,656 կՎտ.ժ կամ 4,04%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

«Վեոյիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

● Ստորև աղյուսակում ներկայացնում են նույնիսկ ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Շահագործումից հանված ջրագիծ	մետր	80
Կառուցված ջրագիծ	մետր	281.6
Կառուցված կյուղագիծ	մետր	103
Դավիթաշեն համայնքում ջրագծերի թարմացում և ջրագրվման գոտիների տարանջատում	հատ	1
Սպանդարյան և Անուշավան գյուղերի ջրագծերի թարմացում	հատ	1
Երևանի համայնքներում ջրագծերի գոտիների տարանջատում	համայնք	4
Իջևան քաղաքի ջրագծերի, շենքերի և փողոցների թվայնացում	քաղաք	1
Պլանային ջրանջատումներ Երևանում	հատ	2
Վթարային ջրանջատումներ Երևանում	հատ	2
Կոյուղագծերի թվայնացում Մարաշ և Էրեբունի համայնքներում	մետր	202844,086
Մարզերի ճնշման կարգավորիչ փականների տվյալների բազայի ճշգրտում	մարզ	2
Վանաձոր քաղաքի ջրային համակարգի տվյալների բազաների ճշգրտում	քաղաք	1
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	24
Գյումրի քաղաքի ներքին ջրային ցանցի և ջրատարի թվայնացում	հատ	1
ՀՀ բաժանորդների շերտի մաքրում և վերջիններիս համակարգում	հատ	1
Ակտիվների կառավարման վերաբերյալ հավելվածի և ինտերֆեյսի իրականացում (CMMS)	հատ	1
Դիվիզան քաղաքի թվայնացում և բազայի լրացում Google Earth-Basemap- ի հիման վրա	հատ	1
Դիվիզան քաղաքի հատակագծի տեղափոխում AutoCad ձևաչափից GIS ձևաչափ	հատ	1

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը.

«Արզնի 1»

Ջրատարի վրա՝ գազի հորերի տարածքում գտնվող ջրթող փականը կիցաբաց է, դրանից արտահոսող ջուրը հոսում է անհայտ ուղղությամբ, իսկ դիտահորի մտոցը գողված է ու վրան մեծ քար է դրված: Այս մասին տեղյակ է պահվել համապատասխան ծառայությանը:



«Գառնի»

Գառնի ջրատարի՝ Բարձրաշենի և Նուբարաշենի միջև ընկած ձորում, լճերի մոտ եղած հատվածը վթարված է: Առկա է ≈ 5 լ/վ արտահոսք: Տվյալ հատվածը պետք է փոխարինվի $D=800$ մմ, $L=80$ մ նոր ջրագծով:

«Ապարան»

Ջրատարի շրջայցի ժամանակ հայտնաբերվել և կարգավորվել է մի քանի օդահեռ փականների անսարքությունը, վերացվել է 1 վթար: Ինչպես նաև ջրատարի վրա գործող ՀԷԿ-երի տարածքում գտնվող սառնարանային տնտեսության հետնամասում հայտնաբերվել է ապօրինություն, որի վերաբերյալ կազմվել է արձանագրություն:



Արզական-Գյումուշ

Ջրատարերի վրա գտնվող ջրթող փականներից առկա էին արտահոսքեր, որոնք կանխվել են ՔԱՆՁՄ-ի աշխատակիցների կողմից:



Տարբեր տեղամասերում խմբի աշխատակիցների կողմից կատարվել են ջրաքանակների կարգավորման աշխատանքներ:

3.5 ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Քաղաք Գյումրի

● Գյումրի քաղաքի Իսահակյան փողոցում Գոտիավորման բաժնի և Շիրակ տեղամասի համատեղ ջանքերով ուսումնասիրվել և շահագործումից հանվել է շահագործման համար ոչ պիտանի $D=300$ մմ, $L=460$ մ թուջե ջրագիծ, որից միացված էին հարակից թաղամասերը և Տեքստիլ ակումբը սնուցող համապատասխանաբար $D=100$ մմ, $L=130$ մ և $d=50$ մմ $L=220$ մ ջրագծերը: Մ.Սկրտչյան փողոցի վերջնամասը սնուցող $D=100$ մմ թուջե անջատված ջրագիծը միացվել է Իսահակյան փողոցի այգու մեջ գտնվող $D=300$ մմ թուջե ջրագծին $D=63$ մմ ՊԷ խողովակով, $L=4$ մ: Ընդհանուր տնտեսվել է 8 լ/վ ջրաքանակ:




● Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան-Մավոյան փողոցների խաչմերուկում շահագործումից հանվել է $D=150$ մմ պողպատե խողովակ, որը սնուցում էր Գյումրու Օնկոլոգիական հիանդանոցի մասնաշենքը: Այն $D=63$ մմ, $L=4$ մ ՊԷ խողովակով միացվել է նույն ջրագիծը հատող մեկ այլ $D=150$ մմ ջրագծի: Արդյունքում շահագործումից հանվել է $D=150$, $L=30$ մ ջրագիծ:



● Գյուղ Վահրամաբերդ. Շիրակ տեղամասի կողմից սպասարկվող Վահրամաբերդ գյուղում Լենգես կոչվող թաղամասում, շահագործումից հանվել է $D=50$ մմ և $L=120$ մ քայքայված, շահագործման համար ոչ պիտանի ջրագիծ: Տնտեսվել է 1,5 լ/վ ջրաքանակ:

● Լճաշենի գոբամասում ջրաչափից հետո կատարված վթարադրոնողական աշխատանքների արդյունքում գոբամասի տարածքում հայտնաբերվել է $Q=0,6-0,7$ լ/վ քանակությամբ վթար:



● Հացառատ-Լճաշեն ջրատարի վրա կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Նորաշեն գյուղի մոտ հայտնաբերվել է անտեր, վթարված միացում, որից ջրի արտահոսքը կազմում էր ≈ 3 լ/վ:



● Նախրյան-Սայաթ Նովա փողոցների խաչմերուկում կատարված աշխատանքների արդյունքում $d=200$ մ թուջե խողովակի վրա հայտնաբերվել է $0,8$ լ/վ քանակությամբ վթար, որը Սևան ՇՏ-ի աշխատակիցներ կողմից անմիջապես վերացվել է:



● Մաշտոց տեղամասի աշխատակիցների կողմից $d=700$ մ վթարված խողովակի մեջ ներարկվել է $d=400$ մ $l=144$ մ ՊԷ խողովակ, ինչպես նաև $d=700$ մ խողովակի վրա տեղադրվել են $d=400$ մ և $d=200$ մ նոր փականներ: Շահագործումից հանվել է $d=250$ մ, $l=300$ մ մասնավոր տարածքներով անցնող վթարային վիճակում գտնվող թուջե խողովակաշար: Արդյունքում տնտեսվել է 10 լ/վ ջրաքանակ:



● Կենտրոն 1-ին գոտու Նալբանդյան ենթագոտու ջրաքանակը տարիներ առաջ եղել է 11 լ/վ: Գիշերցերեկ կատարված չափումների արդյունքում և հոսքաչափի տեղադրումից պարզվել է, որ ջրաքանակը դարձել է 15 լ/վ: Կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և վերացվել է $Q=10$ լ/վ վթար, փոխարինվել է մեկ հատ վթարված փական, շահագործումից հանվել է 100 մ, 20 մ ահավոր վթարային ջրագիծ: Արդյունքում ամբողջ գոտու ջրաքանակը նվազել է 10 լ/վ-ով:



● Վարսեր գյուղում իրականացված աշխատանքների արդյունքում առանց սեփականատիրոջ վթարված փառուները հայտնաբերվելուց հետո խցափակվել են:



● Նոր Նորքի 7-րդ գանգված Ավետիսյան 23 շենքի մուտքագծի վրա հայտնաբերված վթարը վերացվել է, $d=50$ մ պողպատից խողովակը փոխարինվել է $d=63$ մմ ՊԷ խողովակով: Արդյունքում տնտեսվել է $Q=2$ լ/վ ջուր:



● Շենգավիթ տեղամասում՝ Արին-Բերդի 1/1 հասցեում, հայտնաբերվել և վերացվել է մեկ վթար, հին քայքայված ջրագիծը փոխարինվել է նոր ՊԷ $L=20$ մ երկարությամբ խողովակով: Արդյունքում տնտեսվել է ≈ 2 լ/վ ջրաքանակ:











● Շահումյանի տեղամասի Իսակովի գոտում կատարված ուսումնասիրությունների արդյունքում առաջարկվել է «Վեստա» խանութ-սրահի դիմաց տեղադրել $d=200$ մմ ՃԿՓ, իսկ Արգավանդի ջրագծի վրա $D=80$ մմ ՃԿՓ: Արդյունքում տնտեսվել է 5 լ/վ ջրաքանակ:



Քաղաք Երևան

● Ստորև ներկայացված են Երևան քաղաքում տեղադրված գիշերային ծախսաչափերի գրաֆիկական տվյալները նոյեմբեր ամսվա ընթացքում:





ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Նոյեմբերի առաջին տասնօրյակին, քանի որ շարունակվում էին պատերազմական գործողությունները Արցախում, հաշվի առնելով հանրային տրամադրությունները, Վեոլիա Ջուր ՓԲԸ Հանրային կապերի բաժինը /ՀԿԲ/, ՄԵՏՏԻԿԱ Խորհրդատվական ընկերության հետ համագործակցությամբ, աշխատել է ձեռնպահ փաստաթղթերով համակարգում տարվող աշխատանքները ներկայացնելուց:



Հրապարակումների հիմնական թեման եղել է Վեոլիա Թիմի մասնակցությունը պատերազմին, որի ընթացքում ցավոք մենք ոչ միայն վիրավորներ ունեցանք, այլ նաև զոհեր: Ընդհանուր առմամբ ապահովվել է 4 հրապարակում, որով ոչ միայն հանրությանը կոչ ենք արել թիկունքում լինել նույնքան ամուր, որքան առաջնագծում, այլև տեղեկացրել ենք, որ Վեոլիա Թիմը լրացուցիչ փոխանցել է «Հայաստան» հիմնադրամին 20,3 մլրդ դրամ: Այդ ընթացքում հանրությանը նաև ներկայացվել է ջրանջատումների և հայտարարվող տարատեսակ մրցույթների մասին պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվությունը:



Այնուհետև, իրավիճակի փոփոխությանը համընթաց, որոշակիորեն անդրադարձ է կատարվել համակարգում տարվող աշխատանքներին: Սպառողներին տեղեկացվել է այն մասին, որ անգամ անցած ծանր օրերին Վեոլիա Ջուրը շարունակել է բարեխղճորեն կատարել ստանձնած պարտավորությունները, մասնավորապես, ժամանակին արձագանքել է վթարներին,



բնակիչների բողոքներին, իրականացնել է ներդրումային ծրագրեր, որի շնորհիվ մենք կայուն ջրամատակարարման ապահովման առումով խնդիրներ չենք ունեցել: Այս ընթացքում հանրային ամենաբարձր հնչեղություն ունեցող իրադարձությունը եղել է ՀՀ ՀՕԿՀ-ի կողմից 2021թ. համար մատուցվող ծառայությունների նոր սակագներ հաստատելը, որին Հանրային կապերի բաժինը անդրադարձել է անհապաղ, ինչի շնորհիվ հնարավոր է դարձել խուսափել հանրային անհարկի շահարկումներից ու թյուրըմբռումներից:

Նոյեմբերի մյուս կարևորագույն իրադարձությունը Ֆրանսիայի կառավարության նախաձեռնությամբ Հայաստանի և Արցախի պատերազմից տուժած բնակիչներին ցուցաբերվող հումանիտար աջակցությունն էր, որի շրջանակներում, այլ հասարակական ու կորպորատիվ կազմակերպությունների թվում, Վեոլիա Հիմնադրամը զգալի օգնություն է առաքել Հայաստան: Այս մասին 3 անգամ նշվել է թե իբրև առանձին տեղեկատվության, և թե Ֆրանսիայի պաշտոնական պատվիրակության մամուլի ասուլիսի լուսաբանման շրջանակներում: Նախկինի պես, որպես հանրության հետ կապի հիմնական միջոց ծառայել է ֆեյսբուք սոցիալական ցանցի Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի Veolia Armenia պաշտոնական էջը: Մակայն որոշ հրապարակումներ տեղ են գտել նաև veolia.am պաշտոնական կայքում, ինչպես նաև ուղարկվել են հիմնական զանգվածային լրատվամիջոցներին:



Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի Veolia Armenia պաշտոնական էջը: Մակայն որոշ հրապարակումներ տեղ են գտել նաև veolia.am պաշտոնական կայքում, ինչպես նաև ուղարկվել են հիմնական զանգվածային լրատվամիջոցներին:

ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

● Հաշվետու ամսում Բաժինը մշակեց և «Տեխնիկական անվտանգության ազգային ինստիտուտ» ՍՊԸ-ի փորձագետների հետ համաձայնեցրեց Ընկերության արտադրական վտանգավոր օբյեկտ հանդիսացող քլորակայանների, ամբարձիչ սարքավորումների, ամբարձիչ և քլոր տեղափոխող մեքենաների տեխանվտանգության փորձաքննության պլան-ժամանակացույցը և ներկայացրեց այն Ընկերության ղեկավարության հաստատմանը:

5.2. COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

● ՈԱԱ Բաժինը ՄՈԿ վարչության հետ համատեղ օպերատիվ կերպով Ընկերությունում COVID-19-ով վարակված կամ կոնտակտավոր աշխատողների մասին համապատասխան տեղեկատվությունը տրամադրեց ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի պատասխանատուներին:

● Ինչպես նաև ամենօրյա ռեժիմով Ընկերության ստորաբաժանումներից ՈԱԱ բաժնին ներկայացվեցին կառուցվածքային ստորաբաժանումների անձնակազմերի ջերմաչափման և գրասենյակների ախտանման աշխատանքների վերաբերյալ տվյալները:


● Ընկերությունը, ելնելով աշխատողների շրջանում COVID-19 համավարակի տարածման կանխարգելման անհրաժեշտությունից, շարունակեց կազմակերպել Էկոսենս բժշկական լաբորատորիաների կողմից թվով 65 աշխատողի՝ ՊՇՌ թեստավորման աշխատանքները:

● Աշխատողների մասնակցությունը ՊՇՌ թեստավորմանը եղել է բացառապես վերջիններիս համաձայնությամբ:

● Հաշվետու ամսվա ընթացքում Ընկերությունում COVID-19 համավարակի տարածման կանխարգելման շրջանակներում ՈԱԱ Բաժինը կազմակերպեց նաև Ընկերության գրասենյակների մոտ 755 քմ մակերեսի լրացուցիչ ախտահանման աշխատանքները:

● Շարունակվեց Ընկերության ստորաբաժանումներին տրամադրվել համավարակի տարածման կանխարգելմանն ուղղված անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցները:

Տրամադրված անհատական պաշտպանության միջոցներ և պոստերներ /մարտ-նոյեմբեր




5.3. ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ/ՄԵՄԻՆԱԸՆԵՐ

● Ընկերության ղեկավար կազմը և մի շարք ստորաբաժանումների ղեկավարներ մասնակցեցին Վեոլիա Կամպուսի կողմից կազմակերպված «Համապատասխանության հեռավար դասընթացին» դասընթացի E-Learning կառավարման հարթակով և լրացրեցին Կամպուսի կողմից ներկայացված դասընթացի վերաբերյալ հարցաշարը:

● Հաշվետու ամսում Բաժինը «Նարեկ» գիտահետազոտական կենտրոնի հետ համատեղ կազմակերպեց և իրականացրեց Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 1 աշխատակցի համար «Գազասարքավորումների տեխնիկապես սարքին վիճակի և անվտանգ շահագործման պատասխանատու անձի մասնագիտական որակավորման դասընթաց» և թվով 11 աշխատակցի համար՝ «Էլեկտրաանվտանգության մասնագիտական որակավորման դասընթաց» և գիտելիքների ստուգում:

2019-2020թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՅ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



5.4. ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● ՈԱԱ բաժինը Ընկերության ՄՌԿ վարչության հետ համատեղ, ղեկավարվելով ՀՀ կառավարության 27/09/2020 թվականի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» N 1586-Ն որոշման և «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի պահանջներով, Ընկերության Ղեկավար կազմի հանձնարարականների հիման վրա համակարգեց Օրենքից բխող Ընկերության պարտավորությունների շրջանակներում Զորահավաքային և զորակոչային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներից և ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեից իջեցված կարգադրությունների կատարման, դրանց փաստաթղթավորման գործընթացները:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

6.1. Համակարգչային ցանց

Նոյեմբեր ամսվա ընթացքում IT բաժնի կողմից իրականացված հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև

- Մասնակցել է “Վեռլիա” Խմբի IT անվտանգության բաժնի կողմից կազմակերպված IT անվտանգության խորհրդի ժողովին: Քննարկվել են արդիական SS վտանգները և խմբի SS անվտանգության նախագծերը:
- Իրականացվել է IU-Connect հեռախոսային կենտրոն համակարգի ծրագրային տարբերակի թարմացում:
- Ստեղծած ազատ համակարգիչների և մոնիտորների ցանկից առանձնացվել և բաշխվել են սարքավորումների մի մասը: Փոխարինվել են փչացած մոնիտորներ և հնամաշ համակարգիչներ կազմակերպության աշխատակիցների մոտ:
- Ավարտվել է հեռահար տվյալներ փոխանցող ջրաչափերի սարքավորման և ծրագրային ապահովման աշխատանքի տեստավորումը բջջային հեռախոսների համար: Այդ ծրագրային ապահովումը հնարավոր չէ կիրառել բջջային հեռախոսների հետ:
- Խստացվել են Ֆիշինգային էլժ նամակների (phishing email) դեմ կիրառվող քաղաքականությունը:
- Տրամադրվել են նոր օգտատերեր հեռահար աշխատող աշխատակիցների համար: Իրականացվել են համապատասխան կարգավորումներ:
- Իրականացվել է Linux օպերացիոն համակարգով աշխատող սերվերների արդիական թարմացումների տեղադրումը:
- Իրականացվել է Windows օպերացիոն համակարգով աշխատող սերվերների արդիական թարմացումների տեղադրումը:
- Կազմակերպվել է ժողով Մարդկային Ռեսուրսների բաժնի հետ որի ընթացքում քննարկվել են ՄՌ բաժնի թվայնացման համար հնարավոր ուղիներ և տարբեր գործառնությունների ավտոմատիզացման և հեշտացման տարբերակներ: Ժողովի արդյունքում որպես առաջնային քայլեր հաստատվել են ստորև նկարագրված աշխատանքները և մեկնարկվել է այդ աշխատանքների իրականացման պլանավորման փուլը
 - ▶ Բացել G Suite օգտանուններ veolia.com հասցեներով բոլոր ՄՌ աշխատակիցների համար
 - ▶ Ստեղծել ՄՌ բաժնի խմբային նամակագրության հասցե և իրազեկել այդ հասցեի վերաբերյալ կազմակերպության բոլոր աշխատակիցներին
 - ▶ Ստեղծել Google Currents բլոգ, համալրել այն ՄՌ բաժնի կողմից տրամադրված առաջնային տեղեկատվությամբ և իրազեկել այդ բլոգի վերաբերյալ կազմակերպության բոլոր աշխատակիցներին
 - ▶ Ստեղծել Shared Folders պանակներ ՄՌ բաժնի համար և աջակցել առկա ֆայլերի տեղափոխման հետ
 - ▶ Ստեղծել ՄՌ բաժնի ինտրանետ կայքի նախնական կառուցվածք և նախապատրաստել նյութեր՝ նկարներ, լոգոներ, տեքստ և այլ
- Մպասարկվել է մոտ 400 զանգ IT բաժնի աջակցության համարով
- Գրանցվել և փակվել է մոտ 350 աջակցության տոմս:

6.2. Ինտերակտիվ համակարգ

Նոյեմբեր ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- “Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության” ձևավորման հետ կապված՝ տեղի են ունեցել մի շարք գործընթացներ:
- Ինտերակտիվ համակարգում ստեղծվել է առանձին ծրագրային ապահովման նոր մոդուլ՝ ընկերության քարթրիջների գործընթացի ապահովման համար:
- Մի շարք փոփոխություններ են կատարվել ինտերակտիվ համակարգում՝ կապված ընկերության ստորաբաժանումների ավտոմատիզացման ուղղությամբ:

● Ակտեր
Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է նոյեմբեր ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Խախտման արձանագրություն			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Հյուսիս	4	2.1	0.4
Էրեբունի	8	2.6	0.5
Շենգավիթ	6	2.9	0.5
Կենտրոն	6	6.9	1.2
Արաբկիր	2	0.6	0.1
Շահումյան	3	5.7	1.0
Քանաքեռ-Զեյթուն	2	1.7	0.3
ԱՎԲ	36	31.9	5.6
Ծիրակ	2	0.2	0.0
Արարատ	7	0.6	0.1
Աբովյան	8	3.4	0.5
Հրազդան	2	0.4	0.1
Ալավերդի	3	0.8	0.1
Գավառ	5	1.7	0.3
Էջմիածին	2	0.4	0.1
Թալին	1	0.3	0.0
Արմավիր	1	0.1	0.0
Աշտարակ	6	0.9	0.1
Չարենցավան	1	1.5	0.3
Մայիսակ	1	0.1	0.0
Ստեփանավան	2	1.0	0.2
Ընդամենը	108	66.0	11.6

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ) Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է նոյեմբեր ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Լաբորատորիա				
Տեղամաս	Միջամտություն		Մնասրբություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Հյուսիս	3	0.77	41	0.19
Էրեբունի	5	2.32	27	0.29
Կենտրոն	13	12.53	56	0.99
Արաբկիր	5	1.29	40	0.37
Մաշտոց	6	2.84	13	0.06
Շահումյան	8	4.41	49	0.33
Քանաքեռ-Զեյթուն	2	0.52	14	0.05
Լոռի	5	0.40	42	0.33
Ծիրակ	36	8.50	231	1.31
Արթիկ	6	4.12	24	0.12
Արարատ	3	0.19	7	3.52
Աբովյան	4	1.80	30	0.13
Հրազդան	6	1.88	27	0.12
Ալավերդի	1	0.26	14	0.06
Աշոցք	-	-	3	0.01
Այաթան	4	1.07	-	-
Արտաշատ	5	0.82	72	0.81
Գավառ	-	-	4	0.01
Գորիս	1	0.52	5	0.02
Դիլիջան	-	-	6	0.03
Էջմիածին	1	1.35	2	0.19
Թալին	-	-	10	0.05
Իջևան	3	0.08	14	0.06
Կապան	-	-	1	0.00
Ճամբարակ	-	-	1	0.00
Մասիս	-	-	6	2.07
Նոյեմբերյան	-	-	13	0.09
Արմավիր	13	3.09	66	0.31
Ջերմուկ	-	-	2	0.00
Սևան	5	3.56	15	0.06
Աշտարակ	-	-	1	0.06
Միսիան	1	1.55	-	-
Մայիսակ	7	0.90	18	0.17
Ստեփանավան	2	1.03	20	0.09
Տաշիր	-	-	1	0.02
Ընդամենը	145	54.89	875	9.03



«ՎԵՈՒԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Արովյան 66ա
E-mail: info@vjur.am